ԳՆԱՀԱՏՈՂ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՌՈԶԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Լեզվի և իրականության փոխհարաբերության ընթացքում ի հայտ է գալիս շրջապատի իրերն ու երևույթներն անվանելու, դրանց նկատմամբ վերաբերմունք, գնահատում արտահայտելու անհրաժեշտություն։ Այս տեսակետից ուշագրավ են որակական ածականները։ Առավելապես վերջիններիս է վերագրվում այն գնահատող դերը, որը հանդես է գալիս հաղորդման ընթացքում։ Իսկ գնահատումը պայմանավորում է բառիմաստի սուբյեկտիվ երանգավորումը։

Ածականն ինքնին կարող է այս կամ այն բնորոշումն արտահայտել՝ ուրախ *(լավ),* բարեհամբույր *(լավ),* ապուշ *(վատ) և այլն, բայց այս հատկանիշներն իրենց բազմազան կիրառությունները գտնում են համատեքստում, որտեղ դրական համարվող հատկանիշը կարող է նաև հակառակը ընկալվել։ Այսպես, օրինակ. Նա չափազանց* ուրախ *էր և թեթևամիտի տպավորություն էր թողնում։ Այս նախադասության մեջ* ուրախ *դրական համարվող հատկանիշը ստանում է բացասական արտահայտություն։ Նման դեպքերում գործ ունենք խոսքի ոճաբանության՝ լեզվական միավորի ոճական արտահայտության կոնկրետ դրսևորման հետ։ Նույնպիսի կիրառություն կարող են ունենալ նաև հարաբերական ածականները։ Վերջիններս վերաբերմունք, գնահատում արտահայտելու տեսակետից համեմատաբար պակաս ակտիվ են. դրանք այդպիսի դեր կատարում են հիմնականում վերաիմաստավորված, փոխաբերական կիրառություններում։ Դա հասկանալի է, որովհետև հարաբերական ածականների էությունն այնպիսին է, որ դրանք արտահայտում են առարկայի հատկանիշը հենց այնպես, ինչպիսին այն կա իրականության մեջ, առանց որևէ վերաբերմունքի* (ոսկյա, ապակյա, գաշտային *և այլն)։ Իրենց ուղղակի իմաստով կիրառություններում հարաբերական ածականները հիմնականում ոճականորեն չեղոք են, իսկ փոխաբերական կիրառությունները, ընդհակառակը, խոսուն են ու արտահայտիչ։*

Տարբեր իմաստներ ունեցող ածականների քննությունը ցույց է տալիս, որ առարկայի հատկանիշ արտահայտում են բոլոր ածականները, ինչպես որակական, այնպես էլ հարաբերական, իսկ գնահատող, արժեքավորող երանգ կարող են ունենալ հիմնականում որակական ածականները, այն էլ՝ ոչ բոլորը։

Որակական ածականների գնահատում արտահայտելը կախված է ոչ միայն տվյալ ածականի իմաստից, այլ նաև այն առարկայի բնույթից, որը գնահատվում է տվյալ ածականով։ Այսպես՝ եթե մարդկային հասարակությանը ծանոթ, մատչելի առարկաները, երևույթները կարելի է գնահատել այս կամ այն առումով՝ լավ գիրք, լավ (ճանելի) ձայն, վատ վերաբերմունք *և այլն, ապա չենք կարող ասել* լավ (վատ) երկրագունդ, լավ *կամ* վատ մոլորակ *և այլն։ Լավագույն դեպքում գուցե մասնագիտական առումով հնարավոր լինի մոլորակ գոյականի և նրա հատկանիշն արտահայտող գնահատող ածականի զուգադրությունը, սակայն լայն հասարակության համար խորթ է ածականի նման կիրառությունը, հետևաբար, այսպիսի դեպքերում չեզոքանում է գնահատող ածականի արտահայտչականությունը։ Դա պայմանավորվում է հենց այդ առարկաների էությամբ, քանի որ խոսքը վերաբերում է այնպիսի առարկաների, որոնք նախ եզակի են և հնարավոր չէ դրանք համեմատել միմյանց հետ, գնահատել դրական կամ բացասական լինելու տեսակետից։ Բացի այդ, եթե հասարակական կյանքում որևէ առարկա կարող է գործածվել այնքան, որ մարդը հնարավորություն ունենա այսպես թե այնպես գնահատել այն* (լավ

մատիտ, վատ նկար և այլն), ապա նույնը չի կարող անել քիչ ծանոթ կամ համարյա անծանոթ իրերի, երևույթների նկատմամբ։ Այդ պատճառով սահմանափակ կլինի նաև անհատի վերաբերմունք արտահայտելու հնարավորությունը։ Իր ունեցած գիտելիքներով և դրանց արտահայտության լեզվական միջոցներով հնարավոր է խոսքը տպավորիչ դարձնել հիմնականում այն դեպքերում, երբ հաղորդողը լավ, գոնե բավարար չափով ճանաչում է հաղորդման օբյեկտը։

Ածականի և նրանով բնութագրվող գոյականների իմաստով պայմանավորված այս ոճական առանձնահատկությունը հիշեցնում է նաև այն որակական ածականների կիրառությունները, որոնք ունեն գործածության որոշակի ոլորտ։ Այսպես՝ ֆաջ, տխմար, խելոք և այլ վերաբերմունք արտահայտող որակական ածականները հանդես են գալիս հիմնականում անձի անունների հետ։ Որակական ածականները իմաստային լայն ընդգրկմամբ պատկանում են բառապաշարի իրենց ակտիվությամբ աչքի ընկնող միավորների թվին, որոնք որոշակի տեղեկության հետ պարունակում են նաև ակնհայտ արտահայտչական կարողություն։ Մյուս կողմից՝ դրանք ունեն այլ բառերի հետ մեծ զուգորդելիություն, բազմազան ու բազմապիսի կառույցներում հանդես գալու առանձնահատկություն։ Սա էլ, իր հերթին, հիմքեր է ստեղծում ոճական բազմազանության համար։

Իրենց բառիմաստում գնահատում պարունակող կառույցները հաղորդակցման պրոցեսում պահանջում են հետևյալ գործոնների անհրաժեշտությունը. ինքը՝ հատկանիշ արտահայտող բառը, որակող, գնահատող անհատը՝ սուբյեկտը և գնահատման օբյեկտը. այս բոլորը հանդես են գալիս մի կառույցում, որը գնահատող, բնորոշող, միաժամանակ վերաբերմունքային իմաստ է արտահայտում[1]։ Գնահատող կառույցի հիմնական անդամներից մեկը կառույցի սուբյեկտն է, այն անհատը, որը բնորոշում է, որակում է այս կամ այն օբյեկտը։ Սուբյեկտը առկա է բոլոր կառույցներում. այն կարող է լինել հեղինակը, գործող անձը կամ էլ երկուսը միասին։ Հեղինակային խոսքում ստեղծագործության հեղինակը և գնահատող կառույցի սուբյեկտը համընկնում են, ինչպես՝ «Քաղաքի աղմկաճույզ, բայց այնքան հաճելի վեճերից հետո, բնությունը, հազարամյա, ծեր, բայց ամեն անգամ վերածնվող ու միշտ թարմ, կախարդական բնությունը արբեցրել է ինձ իր հրապույրներով» (ՀՔ, Ը, 1, 25)։

Այստեղ կա երկու կարգի գնահատող վերաբերմունք՝ Քաղաքի աղմկաճույզ, բայց այնքան հաճելի վեճերը։ Հազարամյա, ծեր, բայց... միշտ թարմ բնությունը։ Այս կառույցների ընդհանուրն այն է, որ երկուսն էլ գնահատող են և երկուսում էլ կառույցի սուբյեկտն ու տրամաբանական սուբյեկտը՝ տրվյալ դեպքում պատմվածքի հեղինակը, նույնն են։ Սակայն առաջին դեպքում քաղաքի աղմկահույզ վեճերը կարող են հաճելի լինել միայն հեղինակին, իսկ երկրորդում՝ գրողը գեղարվեստական հնարանքներով խոսում է բնության հավիտենական ու առինքնող լինելու մասին, որն այդ կերպ կգնահատվեր ոչ միայն ժամանակակից մարդու տեսանկյունից, այլև այն այդպիսին է բոլոր ժամանակների համար։ Կարող է այս կամ այն գնահատականը լինել հասարակության որևէ խավի կարծիքը կամ էլ տիպական լինել որևէ ժամանակաշրջանի համար. սրանք արդեն բառիմաստի, տվյալ դեպքում ածականի իմաստի փոփոխության հետ կապված երևույթներ են, որոնք սերտորեն առնչվում են լեզվի և այն կրող ժողովրդի պատմությանը։ Միաժամանակ դրանք հանդես են գալիս յուրաքանչյուր լեզվի առանձին ժամանակահատվածներում, անկախ նրա պատմությունից, քանի որ լեզվական հաղորդակցման համար կարևոր են ոչ թե այս կամ այն բառիմաստի պատմական փոփոխությունները, վերջիններիս քննությունը, այլ դրանց արդյունքները։ Բառի, նրա կրած իմաստային փոփոխությունների ուսումնասիրությունն ավելի մասնակի հարց է, որը միաժամանակ նպաստում է ժամանակակից լեզվում բառի կիրառական առանձնահատկությունների ավելի ճիշտ ու բազմակողմանի ընկալմանը։

---

[1] Е. Вольф, Грамматика и семантика прилагательного, М., 1978, с. 35.

Գեղարվեստական գրականության մեջ հաճախ հեղինակը ոճական կամ այլ նպատակներով իր կարծիքը, վերաբերմունքն արտահայտում է ոչ թե անմիջականորեն՝ իր խոսքերով, այլ հերոսներին խոսեցնելով։ Նման դեպքերում երբեմն հեղինակը դիմում է գրային, բառային, ձևաբանական ոճաբանության ընձեռած հնարավորություններին՝ չակերտներ, շղագիր, փակագծեր, եղանակավորող բառեր, բառապաշարի հուզաարտահայտչական շերտին պատկանող բառերի կիրառություն և այլն։ Օրինակ, այդպես է վարվել Մուրացանը իր «Հատուկ թղթակիցը» պատմվածքում, որտեղ մի շարք գնահատող բառերի (ածական, մակբայ) միջոցով, արտահայտում է իր կարծիքը հոգևորականության մասին. «Մեր քաղաքի երկու պատկառելի քահանաներ, ...փողոցում անվայելչաբար կռվեցին միմյանց հետ և իրար քիթ ու պռունկ ու գարշապար ջարդեցին» (Մ, Եժ, 6, 123)։ Նշված համատեքստում ամբողջ նախադասությունը վերցված է չակերտների մեջ, իսկ պատկառելի և անվայելչաբար բառերը գրված են շղատառերով։ Հասկանալի է, որ հեղինակի վերաբերմունքը քահանաների նկատմամբ դրական չէ և պատկառելի բառը պետք է հասկանալ հակառակ իմաստով։ Լեզվի արտահայտչական հնարավորությունների ու բառապաշարի օգտագործման նման և այլ կիրառությունների կարելի է հանդիպել շատ հեղինակների ստեղծագործություններում, որոնք նպատակ ունեն արտահայտելու իրականության, ինչպես նաև մարդկային հոգեբանական երևույթների յուրօրինակ գնահատականը, շատ դեպքերում նաև գեղարվեստական ստեղծագործության հեղինակի մտորումները հակիրճ ձևով, սահմանափակ բառաքանակով։

Գեղարվեստական խոսքում կարելի է գնահատող վերաբերմունք արտահայտել որևէ իրի, անձի վերաբերյալ, որի մասին պատմվում է տվյալ համատեքստում։ Գնահատող սուբյեկտը կարող է լինել և՛ հեղինակը, և՛ հերոսը. «Մի փոքր էլ ականջ դնելով ծանոթ, հարազատ ձայներին, պապը հանկարծ կռացավ և գլուխը խոնարհեց գետնին» (ՍՋ, Պ, 27)։ Այստեղ գնահատողը՝ ձայները ծանոթ, հարազատ համարողը, հեղինակն է, մի այլ տեղ՝ հերոսը. «—Օ՜հ, ինչ գեղեցիկ և որքան հրաշալի է մեր երկիրը,— բացականչեց Կամսարյանը, հրապուրվելով բնության այդ սիրուն տեսարաններով» (Մ, Ե, 198)։

Հեղինակային խոսքում գնահատող ածականներ շատ են հանդիպում հատկապես բնությունը, հերոսի արտաքինը նկարագրելիս։ Ինչպես՝ «Նրա թուխ դեմքը, որ արևահար լինելուց ավելի էր սևացել, ծածկված էր խիտ ու երբեք չսանրված մորուքով։ Վերջինս չէր ծածկում տիրող մեծ բերանը, որ եղերված էր հաստ լրթագույն շրթունքներով։ Խոր ընկած աչքերը... թավալվում էին նեղ կապիճներում... իսկ դրանց հովանավորող թավարծի հոնքերը տալիս էին նրա դեմքին մի առանձին գռեհկություն» (Մ, Եժ, 198)։ Դժվար չէ նկատել, որ հերոսի արտաքին նկարագիրը լիարժեք չէր լինի առանց վերը նշված, տարբեր իմաստային դաշտերին պատկանող ածականների։ Այնուհետև հեղինակն անցնում է հերոսի հագուստի նկարագրությանը, որը նույնպես հնարավոր չէ պատկերացնել առանց համապատասխան ածականների կիրառության։ Հիմնականում դրանց շնորհիվ է ամբողջանում ու պատկերավոր դառնում հերոսի արտաքին կերպարանքը՝ այնքան պատկերավոր, որ ցանկացած նկարիչ կարող է նկարել, իսկ քանդակագործը՝ քանդակել։ Կասկածից վեր է, որ գեղարվեստական ստեղծագործությունն առանց այդ բառերի կիրառության դժվար է պատկերացնել։ Դրանց անհրաժեշտությունն ավելի շատ զգացվում է բանաստեղծական խոսքում։

Նշված օրինակները վկայում են, որ որակական ածականներն ունեն կիրառության լայն ոլորտ և ոճական արդյունավետություն։ Նման ածականների առկայությամբ գնահատող անհատն ավելի ընդգծված է արտահայտվում, երբ նշված խոսքի մասը փոխհարաբերության մեջ է մտնում այնպիսի կառույցների հետ, որոնք պարունակում են թվալ, մտածել, կարծել բայերը կամ էլ ըստ ինձ, ըստ նրա, իմ կարծիքով և նման այլ կապակցություններ։ Նշված բառերի և որևէ հատկանիշի գնահատում արտահայտող ածականների միևնույն շարահյու-

սական խմբում հանդես գալու դեպքում գնահատող կառույցի սուբյեկտի կողմից տրվող գնահատականը համընկնում է հաղորդման նպատակին։ Ինչպես՝ Ինձ թվում է, Ս. Խանզադյանի «Թագուհին հայոց» պատմավեպն ամենածամանակակից ստեղծագործություններից մեկն է։ Կարելի է ասել, որ այս դատողությունը, ինչպես նաև այլ բնորոշումները, ունեն բացահայտ սուբյեկտիվ բնույթ և պատկանում են միայն խոսողին և կարող են համընդհանուր կարծիք չլինել։

Գնահատող ածականները, վերը նշված բառերի ու բառակապակցությունների հետ, արտահայտում են նաև մեկ և մեկից ավելի սուբյեկտների կարծիքները՝ խոսողի, խոսակցի (խոսակիցների) և այլ անձանց։ Ընդ որում, այդ կարծիքները կարող են համընկնել և չհամընկնել։ Բոլոր դեպքերում, ինչպիսին էլ լինի համատեքստը, մի բան պարզ է. գնահատող ածականների առկայությունը պայմանավորված է որևէ սուբյեկտի առկայությամբ, քանի որ առանց վերջինիս հնարավոր չէ գնահատել երևույթը, առարկան, անձը այս կամ այն տեսակետից։ Զանազան փոխհարաբերությունների մեջ մտնելով գնահատող կառույցի կամ ասույթի մյուս միավորների՝ հետ՝ ածականները երանգավորում են խոսքը, նպաստում են բացահայտելու նկարագրվող միջավայրը, առարկան, անձը, երևույթը։ Նման դեպքերում, երբ խոսքը վերաբերում է առարկաների, անձերի խիստ անհատական հատկանիշների գնահատմանը, կիրառվում են յուրահատուկ, ավելի սահմանափակ իմաստային համադրելիություն ունեցող ածականներ։ Իսկ երբ խոսվում է այնպիսի հատկանիշների մասին, որոնք համընդհանուր են տարբեր դասի առարկաների, երևույթների համար, այդ դրանք կարող են գնահատվել ավելի լայն իմաստային ընդգրկում ունեցող ածականներով. այս տեսակետից կենսունակ են ծավալային, գունային իմաստ արտահայտող ածականները, քանի որ բնության մեջ որևէ անհատ, երևույթ, առարկա չեն կարող չունենալ վերը նշված հատկանիշները՝ գույն, ձև, չափ և այլն (մեծ քար, մեծ մարդ, մեծ արդյունք)։ Ուստի նման ածականները համադրելի են ավելի մեծ թվով գոյականների հետ։ Դրան զուգահեռ, դրանք ունեն զգալի ոճական արդյունավետություն։

Գնահատվող օբյեկտը հաճախ որևէ անձ է, առարկա կամ իրադրություն և այն արտահայտող բառն իր իմաստով կարող է սահմանափակել գնահատող ածականների ու դրանց հետ զուգադրվող գոյականների միջոցով կազմված բառակապակցությունների քանակը։ Այստեղ դեր է կատարում իմաստային համադրելիության և ոչ համադրելիության հանգամանքը, որն անհնար է անտեսել։ Որպեսզի տվյալ ածականը բնութագրի որևէ անձ, առարկա, երևույթ, անհրաժեշտ է, որ այդ գոյականն ու ածականն արտահայտեն այնպիսի իմաստներ, որոնք տրամաբանորեն կարող են հանդես գալ միևնույն շարահյուսական խմբում։ Ընդ որում, ավելի ակտիվ է գնահատվող գոյականը. այն իր բառիմաստով հնարավոր կամ անհնար է դարձնում որևէ ածականի առկայությունը տվյալ շարահյուսական խմբում. նրա իմաստը պետք է լինի այնպիսին, որ հնարավոր լինի որևէ վերաբերմունք արտահայտել համապատասխան հատկանիշ արտահայտող բառի միջոցով։ Այսպես՝ երեխա բառն այնպիսի հասկացություն է արտահայտում, որ նրան միանգամայն բնորոշ են վախկոտ կամ համարձակ լինելու հատկանիշները։ Մինչդեռ քար բառի համար դրանք մերժելի են։ Ասվածից հետևում է, որ առարկաներ, անձեր, երևույթներ բնութագրելու համար կիրառվում են որոշակի իմաստներ ունեցող ածականներ, չնայած բացառված չեն ածականների մի մասի (իմաստային լայն ընդգրկում ունեցող ածականների) իմաստային տարբեր ոլորտներում հանդես գալը։ Այսպես՝ անհատը բնութագրվում է ավելի բազմակողմանի, քան որևէ իր կամ երևույթ, քանի որ այն, բացի արտաքին հատկանիշներից, բնորոշվում է նաև իր ներքին՝ հոգեբանական (բնավորության գծեր, մասնագիտության հետ կապված առանձնահատկություններ), սոցիալական և այլ առանձնահատկությունների տեսանկյունից։ Մի խոսքով, մարդ անհատի ֆիզիկական, ֆիզիոլոգիական, սոցիալական յուրահատկությունները բնութագրվում են բազմազան միջոցներով։

Ոճական պլանում հետաքրքրություն են ներկայացնում ինչպես մարդու բնական հատկանիշները գնահատող ածականները, այնպես էլ անհատի հասարակական-քաղաքական գործունեության հետևանք հանդիսացող բնորոշումները։ Ընդ որում, վերջիններս ավելի ակտիվ են որևէ անհատի, ստեղծագործության հերոսի բնութագրելու համար, քանի որ, եթե բնական հատկանիշները օբյեկտիվորեն գոյություն ունեցող տվյալներ են և ավելի քիչ տեղեկություն կարող են տալ անհատի մասին, ապա ածականների մյուս խմբի միջոցով գծագրվում է տվյալ անհատն իր մտավոր, հոգեկան, բարոյական, հասարակական և այլ յուրահատկություններով ու ավելի շատ նոր բան կարելի է ասել որևէ մեկի մասին։ Իհարկե, չի բացառվում նաև մարդու արտաքին հատկանիշները բնութագրող ածականների արտահայտչականությունը։ Երբ հեղինակը տալիս է իր հերոսի արտաքին նկարագիրը, ասես հաճախ հնարավոր է լինում կռահել նրա դրական կամ բացասական լինելը, սոցիալական որևէ խավին պատկանելը, որոշ չափով նաև բնավորության դծերը։ Բանավոր խոսքում ևս արտաքինի բնորոշումները խոսուն են ու տպավորիչ՝ արտահայտելով խոսողի վերաբերմունքը, այս կամ այն օբյեկտի նկատմամբ։ Պ. Սևակը «Անլռելի զանգակատուն» պոեմում, նկարագրելով ճեմարանի բակում հավաքված երեխաներին, նրանց մեջ առանձնացնում է փոքրիկ Սողոմոնին՝

Եվ նրանց մեջ՝ սրան նայիր,
Հագին տարազ տաճկահայի.
Կարմիր շապիկ, կանաչ վարտիք՝
Վրան պնդած մաղե գոտիկ,
Նախշուն գուլպա՝ վրան ղոլեր,
Ու պոչավոր ծալված սոլեր։
Դեմքը գունատ, բայց խորոտիկ,
Իսկ հայացքը՝ քելեր-ցոլեր (ՊՍ, ԱԶ, 18)։

Մանուկ Սողոմոնի արտաքինի այս միանգամայն օբյեկտիվ նկարագիրն անդամ ընթերցողին հնարավորություն է տալիս իմանալու, որ նա աղքատ մի մանչուկ է, իսկ վերջին երկու տողում գունատ, բայց խորոտիկ կապակցությունը հուշում է, որ խոսքը դրական հերոսի մասին է, և որ այդ գունատ ու խորոտիկ մանչուկը աճելու և մարմնավորելու է հանճարեղ Կոմիտասին։

Եթե անձը բնութագրվում է արտաքին, ֆիզիկական, հոգեկան, մտավոր կարողություններ տեսանկյունից և այդ գնահատականը շատ դեպքերում կարող է ունենալ արտահայտչական-վերաբերմունքային նշանակություն, ապա առարկաներն ու երևույթները կարող են բնութագրվել ավելի սահմանափակ հատկանիշներով՝ արտաքին, ֆիզիկական։ Այս դեպքում ևս արտահայտչականության, ինչպես նաև տվյալ երևույթը, առարկան դիպուկ բնորոշելու համար կարևոր գործոն է օգտագործված բառի իմաստային յուրահատկությունը և տվյալ լեզվի նորման՝ այն, թե որքանով է այս կամ այն իմաստը լեզվում կիրառական և քիչ հաճախական։ Հնարավոր է, որ տվյալ առարկայի համար բացառված լինի որևէ դրական գնահատում, երբ տվյալ բառի արտահայտած իմաստին անհարիր է այն. կարելի է ասել լավ տրամադրություն, բայց ոչ՝ լավ ճիվանդություն։

Հաղորդման ընթացքում գնահատող ածականների առկայությունը պայմանավորում է նաև գնահատման չափանիշի անհրաժեշտությունը։ Վերջինիս կարիքը զգացվում է ոչ միայն հաղորդողի, խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը հիմնավորելու, ինչպես նաև չափավորելու համար, այլև տվյալ ժամանակաշրջանին բնորոշ նորմաների տեսակետից այս կամ այն երևույթը, իրադրությունը, իրը, անձը և այլն գնահատելու համար։ Իրենց իմաստում գնահատում պարունակող ածականների արտահայտչական կամ այս տեսակետից համեմատաբար չեզոք լինելը բացահայտելու համար կարևոր է գնահատման միջին նորմայի առկայությունը, որը համընկնում է իրերի սովորական վի-

.Հակին[2]։ Գնահատման միջին չափանիշը տվյալ հասարակության համար ընդհանուր, նրա կողմից ընդունված պատկերացումն է, որն ի հայտ է գալիս այս կամ այն օբյեկտը բնութագրելիս։ Իհարկե, երբ խոսքը վերաբերում է սուբյեկտիվ գնահատականներին, ապա այս դեպքում գնահատումն ավելի անհատական բնույթ է կրում, չի համարվում օրինաչափ երևույթ և յուրահատուկ է տվյալ անհատին, համընկնում է նրա պատկերացումներին (հնարավոր է, որ այն տարբերվի ընդհանուրի կարծիքից, մոտենա կամ համընկնի դրան)։ Գնահատող ածականները հանդես են գալիս համարյա բոլոր գործառական ոճերում, քանի որ կյանքի ո՞ր բնագավառին էլ անդրադառնալու լինենք, դրանց կարիքը զգացվում է և բնական էակը այսպես թե այնպես արտահայտում է վերաբերմունք գնահատվող օբյեկտի նկատմամբ։ Նման ածականները հաճախ անփոխարինելի են մամուլի լեզվում։

Ոճական պլանում առանձնապես զգալի է բացարձակ գնահատում արտահայտող ածականների դերը. ինչպես՝ խավարակուռ, բազմահմուտ, մշտուրախ և այլն։ Վերջիններս առանց քերականության (համեմատության աստիճանների) միջամտության, իրենց իմաստային բացարձակությամբ արդեն արտահայտում են այս կամ այն հատկանիշի առավելագույն չափը։ Ինչ խոսք, որ այդ առավելագույնի մասին մեր պատկերացումը ամբողջական չէր լինի առանց վերջինիս համեմատության միջին չափանիշի հետ, որն ընդունվում է տվյալ ժամանակաշրջանում, տվյալ հասարակության կողմից։ Ընդհանրապես, գնահատումն արդեն որոշ չափով սուբյեկտիվություն է նշանակում, իսկ իմաստային նման յուրահատկությամբ օժտված ածականների համար՝ առավել ևս։

Հրապարակախոսական հոդվածներում հեղինակը հաճախ առաջ է քաշում այնպիսի հարցադրումներ, որոնց պարզաբանումն անհրաժեշտ է համարում, համառոտակի վերլուծում է դրանց մասին եղած տեսակետները, արտահայտում է իր կարծիքը և հիմնավորում փաստերով՝ ցանկանալով համոզել ընթերցողին։ Բնական է, նման դեպքերում հեղինակը չի կարող խուսափել գնահատող ածականների կիրառություններից, մանավանդ որ երբեմն ստիպված լինելով շատ արագ արձագանքելու շուրջը կատարվածին, բացահայտելու իր վերաբերմունքը փաստերի, անհատների ու երևույթների նկատմամբ և իր տրամադրության տակ չունենալով անհրաժեշտ ժամանակ, լրագրողը դիմում է նկարագրվող երևույթների գնահատման ազդեցիկ միջոցների, ընտրում է խոսուն վերնագրեր, որոնք կարող են գրավել ընթերցողի ուշադրությունը։ Ինչպես՝ «Հեռավոր, բայց մոտիկ արևելքը» (ԳԹ)։ Գիտական ոճում, որը մյուսների համեմատությամբ առանձնապես զգայուն չէ լեզվի արտահայտամիջոցների նկատմամբ, նույնպես հանդիպում են նման ածականներ։ Բերենք բնագրային օրինակներ. «Հիշենք Ֆրանսիացի մեծ վիպասան Բալզակին» (ԷՋ, ԳՏ, 63)։

«Զարեղ տաղանդը մի փոքրիկ ասպարեզի վրա, ժողովրդի մի փոքր մասի կյանքը ուսումնասիրելով է կերտում իր երկերը» (ԷՋ, ԳՏ, 136)։

Գնահատող կառույցի քննությունը ցույց է տալիս, որ առաջին հայացքից պարզ թվացող այդ շարահյուսական խումբն իր մեջ պարունակում է մի շարք բաղադրիչներ՝ գնահատող սուբյեկտ, գնահատման օբյեկտ, գնահատում արտահայտող բառ և մի շարք համատեքստային առանձնահատկություններ, որոնք օժանդակում են ածականի արտահայտչականության դրսևորմանը։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՔ, ԸԵ—Հրաչյա Քոչար, Ընտիր երկեր, հ. 1, Երևան, 1975։
ՊՍ, ԱՋ—Պարույր Սևակ, Անլռելի Զանգակատուն, Երևան, 1975։

2 Տե՛ս Е. Вольф, նշվ. աշխ., էջ 60։

Մ, եժ—Մուրացան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1963։
ՍՋ, Պ—Ստեփան Զորյան, Պատմվածքներ, Երևան, 1980։
ԳԹ—Գրական թերթ, 16. X. 1981։
ԷՋ, ԳՏ—Է. Ջրբաշյան, Գրականության տեսություն, Երևան, 1980։

ВЫРАЗИТЕЛЬНОСТЬ ОЦЕНОЧНЫХ ПРИЛАГАТЕЛЬНЫХ

РОЗА МКРТЧЯН

Резюме

Имя прилагательное— одно из выразительных частей речи современного армянского языка. Особенно богатыми стилистическими возможностями обладают качественные прилагательные, среди которых стилистически маркированы прилагательные с оценочным значением. В квалификативную структуру входят: ее субъект, которым может быть как автор произведения, так и говорящий; объект, оцениваемый данным прилагательным; оценивающее слово.